ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N ՃՄԲՐ 3-2023
ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԴՐԱՄԱՇՆՈՐՀԻ ՁԵՎՈՎ ՏՐԱՄԱԴՐՎՈՂ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԳՈՒՄԱՐՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՄԱՍԻՆ

ք. Երևան «15» «մայիս» 2023 թ.

Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունը (այսուհետև՝ Պետական մարմին)՝ ի դեմս Պետական մարմնի կանոնադրության հիման վրա գործող գլխավոր քարտուղար Հասմիկ Հակոբյանի, մի կողմից, և «ԱՐԱԳԱԾ ՃԱՄԲԱՐ» ՍՊԸ-ն (այսուհետև՝ Կազմակերպություն)՝ ի դեմս Կազմակերպության կանոնադրության հիման վրա գործող տնօրեն Անդրանիկ Բաբայանի, մյուս կողմից, (այսուհետև՝ միասին՝ Կողմեր), հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2022 թվականի դեկտեմբերի 29-ի «Հայաստանի Հանրապետության 2023 թվականի պետական բյուջեի կատարումն ապահովող միջոցառումների մասին» թիվ 2111-Ն որոշմամբ (այսուհետև՝ Որոշում) ամրագրված դրույթները և Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի 2023 թվականի հունվարի 23-ի թիվ 107-Ա/2 հրամանը, կնքեցին սույն պայմանագիրը (այսուհետև՝ Պայմանագիր) հետևյալի մասին.

1. Պայմանագրի առարկան և գինը

1.1. Պայմանագրով Պետական մարմինը պարտավորվում է Որոշման 1148 «Արտադպրոցական դաստիարակություն ծրագիր» բյուջետային ծրագրի «11005. Դպրոցականների ամառային հանգստի կազմակերպում և տրանսպորտային ծախսերի փոխհատուցում» միջոցառմամբ (այսուհետև՝ Ծրագիր) նախատեսված զոհված, հաշմանդամ դարձած զինծառայողների և աշխարհազորայինների, ծնողազուրկ և սակավ ապահովված բազմազավակ ընտանիքների 7-13 տարեկան երեխաների ամառային հանգստի կազմակերպման նպատակով Կազմակերպությանը հատկացնել մինչև 64851600 (վաթսունչորս միլիոն ութ հարյուր հիսունմեկ հազար վեց հարյուր) ՀՀ դրամ գումար՝ ներառյալ ՀՀ օրենսդրությամբ սահմանված հարկերը և տուրքերը, իսկ Կազմակերպությունը պարտավորվում է Ծրագիրն իրականացնել Որոշմամբ և Պայմանագրով սահմանված կարգով:

1.2. Ծրագրով նախատեսված՝ Կազմակերպության կողմից իրականացվելիք միջոցառումները (այսուհետև՝ միջոցառումներ) և նախահաշիվը ներկայացված են Պայմանագրի անբաժանելի մասը կազմող Հավելված N 1-ում և Հավելված N 2-ում:

2. Կողմերի իրավունքները և պարտավորությունները

2.1. Պետական մարմինն իրավունք ունի՝

2.1.1. ցանկացած ժամանակ (լիազոր մարմնի միջոցով) ստուգել Կազմակերպության կողմից իրականացվող միջոցառումների ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը, ինչպես նաև օրենսդրությամբ սահմանված կարգով իրականացնել ներքին աուդիտ,

2.1.2. Որոշմամբ սահմանված պահանջներին չհամապատասխանելու դեպքում չընդունել իրականացված միջոցառումները՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անհատույց

վերացման ողջամիտ ժամկետ, և Կազմակերպությունից պահանջել վճարել Պայմանագրի 6.2-րդ կետով նախատեսված տուգանքը,

2.1.3. առանց իրականացված միջոցառումների արդյունքների դիմաց գումար տրամադրելու՝ միակողմանի լուծել Պայմանագիրը և պահանջել հատուցել պատճառված վնասները, եթե՝

ա. Կազմակերպությունը ժամանակին չի սկսում ծրագրի իրականացումը կամ ծրագրի իրականացման ժամանակ ակնհայտ է դառնում, որ այն պատշաճ՝ Պայմանագրով սահմանված կարգով և ժամկետներում չի իրականացվելու,

բ. Կազմակերպությունը երկու և ավելի անգամ խախտել է ծրագրով նախատեսված առանձին միջոցառումների իրականացման ժամկետները,

գ. իրականացված միջոցառումները չեն համապատասխանում ծրագրով սահմանված պահանջներին,

2.1.4. Պայմանագիրը ՀՀ օրենսդրությամբ կամ Պայմանագրով նախատեսված հիմքերով լուծելու դեպքում պահանջել իրեն հանձնել անավարտ միջոցառումների արդյունքները,

2.1.5. Կազմակերպության կողմից Պայմանագրի պահանջները չկատարելու դեպքում դադարեցնել ֆինանսավորումը՝ մինչև թերությունների վերացումը,

2.1.6. Կազմակերպության կողմից Պայմանագրով նախատեսված միջոցառումների ֆինանսական ծախսեր ենթադրող ոչ ֆինանսական ցուցանիշների թերակատարման դեպքում պահանջել հետ վերադարձնել համապատասխան չափով հաշվարկված գումարը:

2.2. Կազմակերպությունն իրավունք ունի՝

2.2.1. իրականացված միջոցառման արդյունքը Պետական մարմնի կողմից ընդունվելու դեպքում պահանջել վճարել իրեն հասանելիք գումարը,

2.2.2. Պետական մարմնի կողմից գումարները չվճարվելու դեպքում միակողմանի լուծել Պայմանագիրը և պահանջել հատուցել իրեն պատճառված վնասները,

2.3. Պետական մարմինը պարտավոր է՝

2.3.1. ծրագրով նախատեսված դեպքերում աջակցել Կազմակերպությանը.

2.3.2. կատարել ծրագրի (առանձին միջոցառումների) իրականացման մոնիթորինգ՝ անհրաժեշտության դեպքում համագործակցելով այլ պետական կառավարման մարմինների հետ,

2.3.3. իրականացնել ծրագրով նախատեսված այլ աշխատանքներ,

2.3.4. իրականացված միջոցառման մասին ներկայացված կատարողական հաշվետվությունների վերաբերյալ համապատասխան որոշում ընդունել Պայմանագրի 4.2-րդ կետում նշված ժամկետում:

Եթե ներկայացված հաշվետվությունների համաձայն իրականացված միջոցառումը համապատասխանում է ծրագրի և Պայմանագրի պահանջներին, ապա դրանք ընդունվում են:

2.4. Կազմակերպությունը պարտավոր է՝

2.4.1. Պայմանագրով նախատեսված ֆինանսական միջոցներն օգտագործել Ծրագրով և (կամ) Պայմանագրով սահմանված նպատակներով,

2.4.2. կատարել Պետական մարմնի կողմից բացահայտված թերությունների վերացման նպատակով տրված ցուցումները,

2.4.3. Պայմանագրով սահմանված կարգով Պետական մարմին ներկայացնել միջոցառումների իրականացման մասին ոչ ֆինանսական ցուցանիշների վերաբերյալ հաշվետվություններ, իսկ ծրագրի ավարտից հետո՝ ամփոփ բովանդակային հաշվետվություն (Հավելված N 3),

2.4.4. Պետական մարմնին ներկայացնել եռամսյակային ու տարեկան հաշվետվություններ՝ համաձայն ՀՀ ֆինանսների նախարարի 2019 թվականի մարտի 13-ի N 254-Ն հրամանի, ինչպես նաև ՀՀ օրենսդրությամբ և իրավական այլ ակտերով նախատեսված ձևով ու կարգով, նկատի

ունենալով, որ փաստացի ծախսերը հիմնավորող հաշվապահական և այլ փաստաթղթերը գտնվում է կազմակերպությունում և վերջինս պատասխանատվություն է կրում դրանց իսկության համար,

2.4.5. Պայմանագրի գործողության ընթացքում ապահովել ծրագրի իրականացմանը վերաբերող փաստաթղթերին ծանոթանալու Պետական մարմնի հնարավորությունը՝ վերջինիս կողմից գրավոր պահանջ ստանալու օրվանից 5 աշխատանքային օրվա ընթացքում,

2.4.6. ավարտված միջոցառման կատարված ծախսերի հաշվետվությունը համաձայն 2.4.4-րդ կետի ներկայացնել Պետական մարմին, նկատի ունենալով, որ փաստացի ծախսերը հիմնավորող հաշվապահական և այլ փաստաթղթերը գտնվում են Կազմակերպությունում և վերջինս պատասխանատվություն է կրում դրանց իսկության համար,

2.4.7. Պետական մարմնի կողմից առանձին միջոցառումների իրականացման մասին հաշվետվությունները չընդունվելու դեպքում Կազմակերպությունը պարտավորվում է անվճար՝ Պետական մարմնի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել արձանագրված անհամապատասխանությունները,

2.4.8. ծրագրի իրականացման համար անհրաժեշտ ապրանքները, աշխատանքները և ծառայությունները ձեռք բերել **«Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով**՝ պետության կարիքների համար կատարվող գնումների կանոններին համապատասխան և առաջնորդվել ՀՀ աշխատանքային օրենսդրությամբ,

2.4.9. Պայմանագրով սահմանված միջոցառումների տարեկան արդյունքները թերակատարելու արդյունքում առաջացած տնտեսված գումարները վերադարձնել ՀՀ պետական բյուջե:

3. Մոնիթորինգը

3.1. Պետական մարմինը ծրագրի իրականացման նախնական, ընթացիկ և վերջնական արդյունքների համապատասխանության գնահատման նպատակով իրականացնում է մոնիթորինգ:

3.2. Մոնիթորինգն իրականացվում է Պետական մարմնի և (կամ) նրա կողմից լիազորված անձի կողմից:

3.3. Մոնիթորինգի իրականացման ընթացքում բացահայտված թերացումների ու բացթողումների շտկման նպատակով Կազմակերպությանը տրվում են ցուցումներ, և կատարվում են առաջարկություններ:

3.4. Պետական մարմինը ցանկացած ժամանակ կարող է ծրագրի շրջանակներում իրականացնել մոնիթորինգ՝ ուսումնասիրելով ծրագրին առնչվող ցանկացած փաստաթղթեր և նյութեր:

3.5. Մոնիթորինգի իրականացման ընթացքում Կազմակերպությունից կարող են պահանջվել գրավոր ու բանավոր պարզաբանումներ և բացատրություններ:

4. Պայմանագրի արդյունքի հանձնման և ընդունման կարգը

4.1. Պայմանագրի արդյունքն ընդունվում է Պետական մարմնի և Կազմակերպության միջև հանձնման-ընդունման ակտի ստորագրմամբ:

Մինչև Պայմանագրով ստանձնված պարտավորությունների կատարման համար նախատեսված օրը ներառյալ Կազմակերպությունը armeps էլեկտրոնային համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է*www.minfin.am* հասցեով գործող կայքի «Դրամաշնորհներ» բաժնի «Ուղեցույցներ, ձեռնարկներ» ենթաբաժնում) Պետական մարմնին է ներկայացրել իր կողմից ստորագրված՝ հանձնման-ընդունման ակտը (Հավելված N 5) և

հաշվետվությունը: Ընդ որում Կազմակերպությունը հանձնման-ընդունման ակտը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին:

4.2. Եթե իրականացված միջոցառումը համապատասխանում է Պայմանագրի պայմաններին, Պետական մարմինը Պայմանագրի 4.1-ին կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 15 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և armeps էլեկտրոնային համակարգի միջոցով Կազմակերպությանն է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման ակտը:

4.3. Եթե իրականացված միջոցառումը կամ դրա մի մասը չի համապատասխանում Պայմանագրի պայմաններին, ապա Պետական մարմինը չի ստորագրում հանձնման-ընդունման ակտը և Պայմանագրի 4.2-րդ կետում նշված ժամկետում armeps էլեկտրոնային համակարգի միջոցով Կազմակերպությանը հետ է վերադարձնում հանձնման-ընդունման ակտը՝ նշելով դրա չստորագրման համար հիմք հանդիսացած անհամապատասխանությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պետական մարմինը ձեռնարկում է նման իրավիճակի համար Պայմանագրով նախատեսված միջոցները և Կազմակերպության նկատմամբ կիրառում է Պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

4.4. Եթե Պայմանագրի 4.2-րդ կետով սահմանված ժամկետում Պետական մարմինը չի ընդունում Պայմանագրի 4.1-ին կետում նշված փաստաթղթերը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա իրականացված միջոցառումը համարվում է ընդունված և Պայմանագրի 4.2-րդ կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պետական մարմինը armeps էլեկտրոնային համակարգի միջոցով Կազմակերպությանն է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման ակտը:

5. Վճարման կարգը և ժամկետները

5.1. Կազմակերպությանը վճարումները կատարվում են Պայմանագրի վճարման ժամանակացույցով (Հավելված N 4) նախատեսված չափերով և ամիսներին:

5.2. Պայմանագրի 1.1-ին կետում սահմանված գումարի մինչև 40%-ը Կազմակերպությանն է հատկացվում համաձայն վճարման ժամանակացույցի, գումարի հաջորդ մինչև 40%-ը՝ 1-ին հերթափոխի համար ներկայացված ոչ ֆինանսական ցուցանիշների կատարման վերաբերյալ հաշվետվությունը պետական մարմնի կողմից ընդունվելուց հետո, իսկ գումարի մինչև 20%-ը՝ բովանդակային ամփոփ հաշվետվությունը (Հավելված N 3) Պետական մարմնի կողմից ընդունվելուց հետո՝ Կազմակերպության հաշվեհամարին փոխանցելու միջոցով:

6. Կողմերի պատասխանատվությունը

6.1. Կազմակերպությունը պատասխանատվություն է կրում Պայմանագրով ստանձնած պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար:

6.2. Պայմանագրի N 1 Հավելվածում նշված ծրագրին չհամապատասխանող պարտավորություն իրականացնելու յուրաքանչյուր դեպքում Կազմակերպությունից գանձվում է տուգանք՝ Պայմանագրի 1.1-ին կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով: Ընդ որում՝ տուգանքը հաշվարկվում է նաև Պայմանագիրը սահմանված ժամկետներում կատարելու, սակայն Պետական մարմնի կողմից չընդունվելու, ինչպես նաև հաշվետվությունները Պայմանագրով սահմանված ժամկետներում չներկայացնելու դեպքերում:

6.3. Պայմանագրով նախատեսված ծրագրի կատարման ժամկետը խախտելու դեպքում Կազմակերպությունից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ Պայմանագրի 1.1-ին կետում նախատեսված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.4. Պայմանագրի 6.2-րդ և 6.3-րդ կետերով նախատեսված տուգանքն ու տույժը հաշվարկվում և հաշվանցվում են միջոցառման իրականացման արդյունքում Կազմակերպությանը վճարման ենթակա գումարների հետ:

Տույժը հաշվարկվում է աշխատանքային օրերով՝ Պայմանագրի չկատարված մասի գնի նկատմամբ:

6.5. Պետական մարմնի կողմից Պայմանագրի 4.2-րդ կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.6. Պայմանագրով չնախատեսված դեպքերում Կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7. Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց Պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

7. Պայմանագրի գործողության ժամկետը

7.1. Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև Կողմերի ստանձնած պարտավորությունների՝ ամբողջ ծավալով կատարումը:

8. Անհաղթահարելի ուժի ազդեցությունը (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

8.1. Պայմանագրով նախատեսված պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար Կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է Պայմանագիրը կնքելուց հետո, և որը Կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներն են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրության հայտարարումը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, Պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում Պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարումը: Եթե անհաղթահարելի ուժի ազդեցությունը շարունակվում է 3 ամսվանից ավելի, ապա Կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծելու Պայմանագիրը՝ դրա մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

9. Եզրափակիչ դրույթներ

9.1. Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ մրցույթի գործընթացում, մինչև Պայմանագրի կնքումը, Պայմանագրի կողմը ներկայացրել է պահանջներին չհամապատասխանող փաստաթղթեր (տեղեկություններ և

տվյալներ), կամ վերջինիս հաղթող Կազմակերպություն ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում ՀՀ ֆինանսների նախարարի 2021 թվականի օգոստոսի 10-ի N 422-Ա հրամանի պահանջներին, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պետական մարմինը միակողմանիորեն լուծում է Պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև Պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում, Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն, հիմք կհանդիսանային Պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում՝ Պետական մարմինը չի կրում Պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Պայմանագրի կողմի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պետական մարմնի կրած վնասներն այն ծավալով, որի մասով Պայմանագիրը լուծվել է:

9.2. Պայմանագրում կատարվող փոփոխությունները կամ լրացումներն իրավաբանական ուժ ունեն, եթե կազմված են գրավոր և ստորագրված են Կողմերի կողմից:

9.3. Պայմանագիրը կնքվում է Պայմանագրի Կողմերի թվին համապատասխան թվով օրինակով, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր Կողմին տրվում է Պայմանագրի մեկ օրինակ:

9.4. Պայմանագրով նախատեսված պարտավորությունների չկատարման հետ կապված, ինչպես նաև Պայմանագրով չնախատեսված հարաբերությունները կարգավորվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ:

10. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ՊԵՏԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ	ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ
ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն	«ԱՐԱԳԱԾ ՃԱՄԲԱՐ» ՍՊԸ
ք. Երևան, Վազգեն Սարգսյան 3 Կառավարական տուն 2 ՀՀ ՖՆ գործառնական վարչություն Հ/Հ 900011038206 ՀՎՀՀ 02698732	ք. Երևան Մաշտոցի պողոտա 13 «Հայէկոնոմբանկ» ԲԲԸ Հ/Հ 163068400718 ՀՎՀՀ 02578234
Գլխավոր քարտուղար՝	Տնօրեն՝
_____ Հ. Հակոբյան /ստորագրություն/ Կ.Տ	_____ Ա. Բաբայան /ստորագրություն/ Կ.Տ

Հավելված N 1
«15» «մայիս» 2023 թ. կնքված
N ՃՄԲՐ 3-2023 պայմանագրի

Միջոցառումներ

Իրականացվող միջոցառման						
Անվանումը	Նկարագիրը	Կազմակերպության կողմից կատարման ենթակա գործողությունները	Ակնկալվող արդյունքները և դրանց գնահատման չափանիշները	Միջոցառման իրականացման վերջնաժամկետը	Հաշվետվության ներկայացման կարգն ու ժամկետը	Պահանջվող գումար (դրամ)
Դպրոցականների ամառային հանգստի կազմակերպում	**3-րդ չափաբաժնի համար** **1.** Դպրոցականների ամառային հանգստի ճամբարները (այսուհետ՝ Ճամբար) կազմակերպվում է ճամբարներում և առողջարարական կենտրոններում՝ հիմնված **մարդասիրության**, հանրամատչելիության, ազգային ու համամարդկային արժեքների զուգորդման, անձի ձևավորման և կրթության աշխարհիկ սկզբունքների հիման վրա: **2. Ճամբարը նախատեսված** է զոհված, հաշմանդամ դարձած զինծաղայողների և աշխարհազորայինների, ծնողազուրկ և սակավ ապահովված բազմազավակ ընտանիքների դպրոցահասակ 7-13 տարեկան երեխաների (այսուհետ՝ Երեխաների) համար: **3. Ճամբարի նպատակն** է Երեխաների հոգևոր-բարոյական, գեղագիտական և ֆիզիկական զարգացմանը, հայրենասիրական դաստիարակությանը, բնապահպանական, աշխատանքային և կիրառական գիտելիքների ձեռքբերմանը՝ հաշվի առնելով նրանց պահանջմունքները, հետաքրքրությունները և նախասիրությունները: **4. Ճամբարը պետք է ունենա՝** • Նյութատեխնիկական համապատասխան միջոցներ՝ Երեխաների ամառային հանգիստը կազմակերպելու համար, • օրվա կարգացուցակ և Ճամբարային ծրագիր՝ հաստատված տնօրենի կողմից: Ճամբարային ծրագրի և օրվա կարգացուցակի նախագիծը ներկայացվում է դրամաշնորհային հայտով, համաձայնեցվում Պատվիրատուի հետ: Պատվիրատուն կարող է հանդես գալ առաջարկություններով և դիտողություններով: • Հերթափոխի ուղեցույց՝ հաստատված ճամբարի տնօրենի կողմից:	**3-րդ չափաբաժին** **/2 հերթափոխ,** **յուրաքանչյուր հերթափոխում** **275 երեխա/** **Ճամբարն իրականացնում է բնության ճանաչողության և լեզվաճանաչողության շեշտադրմամբ ճամբարային ծրագիր, ինչպես նաև.** ✓ **Ավազի նկարչության արվեստանոց՝** Բնական ավազը հիանալի և մատչելի նյութ է ստեղծագործելու համար: Ավազի հետ աշխատանքը արդյունավետ կերպով թեթևացնում է հուզական սթրեսը և անհանգստությունը, ինչպես նաև զարգացնում ձեռքի մոտորիկան: ✓ **Պատանի բնասեր՝** Երեխաների համար (հատկապես քաղաքաբնակ) խիստ արդիական է ծանոթանալ շրջապատող բնությանը, սովորել ծառերի և ծաղիկների անվանումները, կարողանալ իրարից տարբերել օգտակար և վնասակար բույսերը, հնարավորինս իմանալ նրանց հատկությունները: Այդ նպատակի համար հետաքրքիր և օգտակար է քայլարշավների կազմակերպումը, որի ընթացքում կարելի է նաև սովորեցնել կողմնացույցի օգտագործման, քարտեզի վրա տեղագրական նշանները տեղակայման և տեղանքում կողմնորոշվելու հմտությունները: Հայրենիքը սիրում են նախ	Զոհված, հաշմանդամ դարձած զինծաղայողների և աշխարհազորայինների, ծնողազուրկ և սակավ ապահովված բազմազավակ ընտանիքների **7-13 տարեկան 550 երեխաների ամառային հանգստի կազմակերպում՝ ըստ «Կազմակերպության կողմից կատարման ենթակա գործառույթներ»** սյունակում թվարկված ուղղության:	**1-ին հերթափոխ՝** 2023 թվականի հուլիսի 1-20: **2-րդ հերթափոխ՝** 2023 թվականի հուլիսի 20-ից օգոստոսի 8:*	Պայմանագրով նախատեսված աշխատանքների կատարման ժամկետը մինչև 2023 թվականի օգոստոսի 8-ն է ներառյալ:* 1-ին հերթափոխի ավարտից հետո՝ մինչև 10 աշխատանքային օրվա ընթացքում, անհրաժեշտ է ներկայացնել ոչ ֆինանսական ցուցանիշների կատարման վերաբերյալ հաշվետվություն: 2-րդ հերթափոխի ավարտից հետո՝ մինչև 15 աշխատանքային օրվա ընթացքում անհրաժեշտ է ներկայացնել բովանդակային ամփոփ հաշվետվություններ:	2 հերթափոխի համար 64 851 600

	• Ամառային հանգիստն իր մեջ պետք ներառի նաև առանձին կրթամշակութային, մարզական և ազատ ժամանցին ուղղված միջոցառումներ, որը ներկայացվում է դրամաշնորհային հայտով, համաձայնեցվում Պատվիրատուի հետ: **Ամառային հանգիստը կազմակերպվում է 2 հերթափոխով, յուրաքանչյուր հերթափոխի տևողությունը 20 օր է:** **Յուրաքանչյուր հերթափոխում հանգստացող երեխաների քանակը սահմանված է սույն հավելվածի «Կատարման ենթակա գործառույթներ» սյունակում:** **5. Ճամբարի կառուցվածքը.** Ճամբարի ղեկավարումն իրականացնում է տնօրենը: Ճամբարն ունի ավագ մանկավարժ/ներ/ և դաստիարակ/ներ/: Ճամբարի ավագ մանկավարժ/ներ/ը և դաստիարակ/ներ/ը պետք է ունենա մանկավարժի որակավորում: Ճամբարը բաժանված է ջոկատների /յուրաքանչյուր ջոկատում առնվազն 20 երեխա/, յուրաքանչյուր ջոկատ կարող է ունենալ առնվազն 2 ջոկատավար /ջոկատավարներին ներկայացվող պահանջները հաստատվում են ճամբարի տնօրենի կողմից/: Երեխաների ֆիզիկական և հայրենասիրական դաստիարակությունն ապահովում են ճամբարի ֆիզղեկն ու զինղեկը: Ճամբարն ունի վարչատնտեսական աշխատակազմ /տնտեսվար, պահեստապետ, առաքիչ, հաշվապահ, տնտեսուհի, ավագ խոհարար, խոհարար, խոհանոցի բանվոր, ասան լվացող/ որի քանակը որոշում է ճամբարի տնօրենը՝ ելնելով ճամբարի ծանրաբեռնվածությունից: Երեխաների առողջության ապահովման նպատակով ճամբարում պետք է գործի շուրջօրյա բուժ ծառայություն՝ բժշկական անձնակազմով /բժիշկ, բուժքույր/: Ճամբարն ունի նաև սպասարկող անձնակազմ /հավաքարար, վարորդ, պահակ, լվացարար, էլեկտրիկ, փականագործ, օժանդակ բանվոր/, որոնց քանակը որոշում է ճամբարի տնօրենը՝ ելնելով ճամբարի ծանրաբեռնվածությունից: Ճամբարն ունի երաժշտությունն ապահովող տեխնիկական միջոցներ և անձնակազմ: Ճամբարի անձնակազմի իրավունքներն ու պարտականությունները սահմանվում են ճամբարի	ճանաչելով: ✓ **Աստղագիտություն՝** Ամառային աստղազարդ երկնքի ուսումնասիրությունը ոչ միայն երևակայության զարգացման միջոց է, այլև գիտելիքներ է տալիս ամեն օր նկատվող երևույթների վերաբերյալ, նպաստում տիեզերքի, աստղերի առավել ամբողջական և ճշմարիտ պատկերացմանը: Սկսնակ աստղագետների և երեխաների համար նախատեսված աստղադիտակի գոյությունը երեխաների համար կբացի տիեզերքի մոգական հմայքը: ✓ **Ամենալավ խոհարարը՝** Խոհարարությամբ հետաքրքված երեխաները կծանոթանան հայտնի ուտեստներ պատրաստելու գաղտնիքներին և կփորձեն ինքնուրույն պատրաստել ցանկալի կերակուրը, կսովորեն նաև սեղանի ձևավորման գաղտնիքները՝ սկսելով խոհանոցային պարագաների ճիշտ օգտագործման ուսուցումից: **Հաշվի առնելով, որ մասնագիտական կողմնորոշման հիմքը ոչ թե կյանքի ընթացքում մեկ մասնագիտության ճիշտ ընտրությունն է, այլ տեղեկացվածությունը, առանցքային կոմպետենցիաների (արդյունավետ հաղորդակցման, զբաղունակության, ձեռներեցության և այլն) զարգացումը և ինքնորոշումը՝ տարբեր տարիքում և սոցիալ-աշխատանքային իրավիճակներում, ապա յուրաքանչյուր հերթափոխի ընթացքում կարևորվում է տարիքային առանձնահատկություններով տարբերակված՝ ավագ տարիքի երեխաների հետ մասնագիտական կողմնորոշման ուղղված զրույցների կամ սեմինարների անցկացումը:**				

	տնօրենի կողմից՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն՝ ելնելով աշխատանքի բաշխվածությունից: **6. Ճամբարի կառուցվածքը, ճամբար-ծնող փոխհարաբերությունների կարգը, երեխաների վարքականոնները, ճամբար մեկնող երեխաների անհրաժեշտ պարագաների ցանկը և ճամբարի օրակարգը հաստատում է ճամբարի տնօրենը:** **7. Ճամբարն ունի արտակարգ իրավիճակներում գործելու և քաղաքացիական պաշտպանության պլաններ:** Ճամբարի կացարանները պետք է ունենան տարհանման ուղիները ցույց տվող նշաններ (սլաքներ), որոնց պատասխանատուն ճամբարի քաղաքացիական պաշտպանության շտաբի պետն է /զինղեկը/: **8.Ճամբարում գործող բուժկետը** պետք է համալրված լինի անհրաժեշտ գույքով և առաջին անհրաժեշտության դեղորայքով: **9. Սննդի կազմակերպումը.** Ճամբարում երեխաներին տրվող սնունդը կազմակերպվում է համաձայն ՀՀ առողջապահության նախարարի 06.06.2014 թ. N 32-Ն որոշմամբ հաստատված «Հանրակրթական ուսումնական հաստատություններում սովորողների սննդի կազմակերպմանը ներկայացվող հիգիենիկ պահանջներ» N 2.3.1-02-2014 սանիտարական կանոնները և նորմերը հաստատելու մասին հրամանի հավելվածի (այսուհետ՝ Կանոններ) 2-6-րդ, 9-14-րդ, 17-րդ, 21-րդ, 24-30-րդ կետերի համաձայն: **Խոհարարական արտադրանքի պատրաստումը** կազմակերպվում է համաձայն Կանոնների 31-42-րդ կետերի պահանջներին համապատասխան: Սննդի կազմակերպման հսկողությանը ներակայցվող պահանջները սահմանված են Կանոնների 48-67 կետերում: Ճամբարում չի կարող կազմակերպվել ևս լրացուցիչ (բուֆետների միջոցով կազմակերպվող) սննդի մատուցում: **10. ՀՀ պետական պատվերի** շրջանակներում ծառայություն իրականացնող ճամբարում այլ ծառայությունների իրականացումը բացառվում է: **11. Տեխնիկական չափանիշները** Ճամբարը պետք է ունենա համապատասխան շենքային պայմաններ **նախատեսված՝** **3-րդ չափաբաժին՝** յուրաքանչյուր հերթափոխը նվազագույնը **285 երեխայի համար**, • Լինի բարվոք վիճակում, որը հնարավորություն	**Չափաբաժնում թվարկված կրթադաստիարկչական ծրագրերից բացի, ճամբարային ծրագիրն իր մեջ պետք է պարունակի նաև հետևյալ կրթական, սոցիալական և մշակութային բաղադրիչները՝** **1.** կրթական բաղադրիչում ավելացնել ցածր առաջադիմություն ունեցող երեխաների հավելյալ կրթական աջակցություն, **2.** առողջ ապրելակերպի դասեր, **3.** ֆիզիկական դաստիարակություն և առողջ ապրելակերպ, **4.** STEM ծրագրեր, **5.** հաղորդակցման և բանավեճի հմտությունների զարգացմանն ուղղված ծրագրեր և միջոցառումներ, **6.** ինքնասպասարկման հմտությունների, ինքնադրսևորման ձևերի, տարիքին համապատասխան «Ես»-ի զարգացում, անհատականության ձևավորում, **7.** «Հայրենասիրություն, ընկերասիրություն, մարդասիրություն» գաղափարների խթանում, **8.** Ժողովրդավարական արժեքների ուսուցում և ապահովում, **9.** երեխաների իրավունքների և դրանց պաշտպանության վերաբերյալ իրազեկման միջոցառումներ, **10.** մարզառազմական և ՏՀՏ ուղղվածության ծրագրեր, **11.** վարպետության դասեր անցկացնելու նպատակով ներգրավվել մշակույթի, արվեստի և սպորտի բնագավառների նշանավոր գործիչներին, **12.** երեխաների գեղարվեստական, ճանաչողական և գեղագիտական ճաշակի ձևավորում, **13.** բազմակողմանի ու ներդաշնակ զարգացում, ընկալման և ըմբռնման գործընթացների ձևավորում, **14.** ազգային ավանդույթների և արժեքների նկատմամբ հարգանքի ձևավորում, **15.** երեխաների աշխատանքային, բնապահպանական, բարոյական,				

	կտա ապահովել երեխաների անվտանգությունը, • << Կառավարության 13.12.2007 թվականի թիվ 1490-Ն որոշման N 4 հավելվածի 4-րդ կետով նախատեսված պահանջներին համապատասխան **ննջասենյակներ նախատեսված՝** **3-րդ չափաբաժին՝** յուրաքանչյուր հերթափոխը նվազագույնը **285 երեխայի համար**, • խաղերի և մարզական միջոցառումների համար նախատեսված առնվազն **2 սպորտհրապարակ** /խաղահրապարակ/, մշակութային միջոցառումների համար նախատեսված **դահլիճ նախատեսված՝** **3-րդ չափաբաժին** յուրաքանչյուր հերթափոխը նվազագույնը **285 երեխայի համար**, • **ճաշարան՝ նախատեսված՝** **3-րդ չափաբաժին** յուրաքանչյուր հերթափոխը նվազագույնը **285 երեխայի համար**, /տեխնիկական չափանիշները՝ համաձայն << Կառավարության 13.12.2007 թվականի թիվ 1490-Ն որոշման N 4 հավելվածի 13-րդ կետի/, • առնվազն 40 **լվացարան** /լվացվելու համար նախատեսված /, • **լոգարաններ և սանհանգույցներ՝ նախատեսված՝** **3-րդ չափաբաժին** յուրաքանչյուր հերթափոխը նվազագույնը **285 երեխայի համար**, /տղաների և աղջիկների համար առանձին առանձին/. համաձայն << Կառավարության 13.12.2007 թվականի թիվ 1490-Ն որոշման N 4 հավելվածի 14-րդ կետի/, • **հագուստի մաքրման սենյակ՝ համաձայն** << Կառավարության 13.12.2007 թվականի թիվ 1490-Ն որոշման N 4 հավելվածի 15-րդ կետի/, • հագուստի և կոշիկի չորապահարան՝ համաձայն << կառավարության 13.12.2007 թվականի թիվ 1490-Ն որոշման N 4 հավելվածի 16-րդ կետի/, • ճամբարը պետք է ապահովված լինի շուրջօրյա	գեղագիտական, հայրենասիրական ու կարգապահական դաստիարակություն, ինչպես նաև՝ ինքնադաստիարակության խթանում, մասնագիտական կողմնորոշում, **16.** ընդհանուր մտածողության զարգացում, **17.** աշխատելու և հանրօգուտ աշխատանքներ կատարելու մղումների ձևավորում, **18.** ստեղծագործական ունակությունների զարգացում, **19.** շրջապատի, շրջակա միջավայրի և բնության նկատմամբ ուշադրության զարգացում, միջանձնային հարաբերությունների ձևավորում, **20.** դպրոցում ձեռք բերած գիտելիքների ամրապնդում ու կիրառում, **21.** կիրառական գիտելիքների ձեռքբերմանը, արտակարգ իրավիճակներում ճիշտ կողմնորոշվելու ինքօգնություն և առհասարակ օգնություն ցուցաբերելու վերաբերյալ գիտելիքների ձեռքբերում և կիրառում: **Չափաբաժնում թվարկված կրթադաստիարակչական ծրագրերից բացի, Պետական մարմնի կողմից** «ԿԳՄՄՆ ԴՇ 1148/11005» ծածկագրով դրամաշնորհային մրցույթի հրավերին կից հրապարակված մշակութային և սպորտային ծրագրերի /այսուհետև՝ ծրագիր/ կազմակերպումն ու անցկացումը պարտադիր է, ընդ որում հրապարակված ծրագիրը վերը նշված բաղադրիչների հետ մեկտեղ անհրաժեշտ է ընգրկել ճամաբարային ծրագրի անցկացման օրակարգում: • Ճամբարներում 2 ողջ հերթափոխի ընթացում հոգեբանի կամ սոցիալական մանկավարժի ներկայությունը պարտադիր է:				

		սառը և տաք ջրամատակարարումով, լվացքատուն՝ համաձայն ՀՀ Կառավարության 13.12.2007 թվականի թիվ 1490-Ն որոշման N 4 հավելվածի 17-րդ կետի/: **12.** Պատվիրատուն երեխաների անվանացանկը կատարողին է տրամադրում մինչև տվյալ հերթափոխի ծառայության մատուցումը սկսելը: Կատարողի աշխատակազմը պատասխանատու է ճամբարում կրթադաստիարակչական ծրագրի անխափան իրականացման համար:	**«ԿԳՄՍՆ ԴՇ 1148/11005» ծածկագրով դրամաշնորհային մրցույթի հրավերին համապատասխան հայտով ներկայացված Ծրագրի իրականացումը պարտադիր է:**				
Ընդամենը							**64 851 600**

մկետները կարող են փոփոխվել ամառային հանգստի կազմակերպումն ապահովելու նպատակով ստեղծվող միջգերատեսչական հանձնաժողովի որոշման շրջանակում (յուրաքանչյուր տարի ՀՀ ոչապետի որոշմամբ ստեղծվում է նման հանձնաժողով):

ՊԵՏԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ
ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն

ք. Երևան, Վազգեն Սարգսյան 3
Կառավարական տուն 2
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ 900011038206
ՀՎՀՀ 02698732

Գլխավոր քարտուղար՝ _____ Հ. Հակոբյան
/ստորագրություն/ Կ.Տ

ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ
«ԱՐԱԳԱԾ ՃԱՄԲԱՐ» ՍՊԸ

ք. Երևան Մաշտոցի պողոտա 13

«Հայէկոնոմբանկ» ԲԲԸ
Հ/Հ 163068400718
ՀՎՀՀ 02578234

Տնօրեն՝ _____ Ա. Բաբայան
/ստորագրություն/ Կ.Տ

Հավելված N 2
«15» «մայիս» 2023 թ. կնքված
N ՃՄԲՐ 3-2023 պայմանագրի

Ն Ա Խ Ա Հ Ա Շ Ի Վ
Միջոցառման ծախսերի

Երեխաների թիվը	Օրերի թիվը	Ընդամենը երեխա-օր	1 երեխա-օրվա համար նախատեսված գումար, դրամ	Ընդամենը գումար, հազար դրամ
550	20	11000	5895,6	64851,6

ՊԵՏԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ
ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն

ք. Երևան, Վազգեն Սարգսյան 3
Կառավարական տուն 2
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ 900011038206
ՀՎՀՀ 02698732

Գլխավոր քարտուղար՝
_____ Հ. Հակոբյան
/ստորագրություն/ Կ.Տ

ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ
«ԱՐԱԳԱԾ ՃԱՄԲԱՐ» ՍՊԸ

ք. Երևան Մաշտոցի պողոտա 13

«Հայէկոնոմբանկ» ԲԲԸ
Հ/Հ 163068400718
ՀՎՀՀ 02578234

Տնօրեն՝
_____ Ա. Բաբայան
/ստորագրություն/ Կ.Տ

Հավելված N 3
«15» «մայիս» 2023 թ. կնքված
N ՃՄԲՐ 3-2023 պայմանագրի

Դրամաշնորհային հաշվետվություն N_____

1. Ընդհանուր տեղեկատվություն

Ծրագրի անվանում	
Դրամաշնորհի N	
Դրամաշնորհատու կազմակերպություն	
Դրամաշնորհառու կազմակերպություն	
Ծրագրի իրականացման ժամանակահատված	
Հաշվետու ժամանակահատված	
Ներկայացման օր	
Հաշվետվության պատասխանատու (անուն, ազգանուն, պաշտոն)	

2. Բովանդակային հաշվետվություն

2.1 Խնդրում ենք թվարկել աշխատանքային պլանով և պայմանագրի թիվ 1 հավելվածով սահմանված միջոցառումների (այսուհետև՝ միջոցառում) շրջանակում կատարման ենթակա գործողությունները հաշվետու ժամանակահատվածի համար:

2.2 Խնդրում ենք նկարագրել ծրագրի առաջընթացն՝ ըստ սահմանված աշխատանքային պլանի (Գանտի աղյուսակ) և միջոցառումների, նշելով՝ Ձեր կողմից իրականացված գործողությունները և ստացված արդյունքները հաշվետու ժամանակահատվածի համար: Որքանով են նշված գործողությունները նպաստել տվյալ ծրագրի խնդիրների/նպատակի իրականացմանը:

Խնդրում ենք նշել հաշվետու ժամանակահատվածում մշակված նյութերի համացանցում տեղադրված հղումները՝ առկայության դեպքում (օրենսդրական առաջարկություններ, համառոտագրեր, հաշվետվություններ, մեդիա պրոդուկտներ և այլն)

2.3 Խնդրում ենք ներկայացնել հաշվետու ժամանակահատվածում քաղած դասերը և/կամ ծագած խնդիրները, որոնք խոչընդոտել են ծրագրի գործողությունների իրականացմանը:

2.4 Խնդրում ենք թվարկել հաջորդ հաշվետու ժամանակահատվածի համար նախատեսված գործողությունները:

2.5 Խնդրում ենք նշել, Ձեր կողմից իրականացված այն գործողությունները, որոնք նախատեսված չեն եղել ծրագրի աշխատանքային պլանով, բայց իրականացվել են ծրագրի նպատակին հասնելու համար:

2.6 Խնդրում ենք, ըստ հերթափոխի, ներկայացնել առողջական խնդիրների, պատահաների, այլ պատճառներով ճամբարը լքած երեխաների շարժը (թվարկված կամ այլ հանգամանքներից ելնելով՝ որևէ երեխային այլ երեխայով փոխարինելու կամ չփոխարինելու, ճամբարու երեխայի չգտնվելու հիմքերը կցելը պարտադիր է):

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

....

ՈՉ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Ծրագրի կամ միջոցառման անվանումը	Չափորոշիչը (նկարագրությունը)	Չափորոշիչի տեսակը	Ոչ ֆինանսական ցուցանիշներ					
			Ցուցանիշի հաստատված կանխատեսումը հաշվետու ժամանակահատվածի համար	Ցուցանիշի փոփոխությունները ըստ համապատասխան իրավական ակտի (+/-)	Ճշտված ցուցանիշը հաշվետու ժամանակահատվածի համար (սյ. 1+սյ.2)	Փաստացի ցուցանիշը (կատարված և ընդունված) հաշվետու ժամանակահատվածում	Հաստատված և փաստացի ցուցանիշների տարբերությունը (սյ.4-սյ.3)	Տարբերության պատճառը (սյ.2-ում նշված իրավական ակտերի համարները և սյ.5-ում նշված տարբերությունների հիմնավորումները)
Ա	Բ	Գ	1	2	3	4	5	6
«11005. Դպրոցականների ամառային հանգստի կազմակերպում և տոնականային ծախսերի փոխհատուցում»	երեխաների թիվը							
	օրերի քանակը							
	հերթափոխի քանակը (օրացուցային օրերը)							

____ ________________

ղեկավարի պաշտոնը, անուն ազգանունը — ստորագրությունը

ՊԵՏԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն

ք. Երևան, Վազգեն Սարգսյան 3
Կառավարական տուն 2
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ 900011038206
ՀՎՀՀ 02698732

Գլխավոր քարտուղար՝ ____________ Հ. Հակոբյան
/ստորագրություն/ Կ.Տ

ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

«ԱՐԱԳԱԾ ՃԱՄԲԱՐ» ՍՊԸ

ք. Երևան Մաշտոցի պողոտա 13

«Հայէկոնոմբանկ» ԲԲԸ
Հ/Հ 163068400718
ՀՎՀՀ 02578234

Տնօրեն՝ ____________ Ա. Բաբայան
/ստորագրություն/ Կ.Տ

Հավելված N 4
«15» «մայիս» 2023 թ. կնքված
N ՃՄԲՐ 3-2023 պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ
ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ՀՀ դրամ

Միջոցառման														
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	մրցույթի պլանով նախատեսված (CPV) կոդը	անվանումը	Կատարման դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2023 թ.-ին՝ ըստ ամիսների, այդ թվում՝											
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
3-րդ չափաբաժին	99999999/1151	«11005. Դպրոցականների ամառային հանգստի կազմակերպում և տրանսպորտային ծախսերի փոխհատուցում»	-	-	-	-	-	-	80 %	20 %	-	-	-	-	100 %
			-	-	-	-	-	-	51 881 300	12 970 300	-	-	-	-	**64 851 600**

ՊԵՏԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ
ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն

ք. Երևան, Վազգեն Սարգսյան 3
Կառավարական տուն 2
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ 900011038206
ՀՎՀՀ 02698732

Գլխավոր քարտուղար՝
_____ Հ. Հակոբյան
/ստորագրություն/ Կ.Տ

ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ
«ԱՐԱԳԱԾ ՃԱՄԲԱՐ» ՍՊԸ

ք. Երևան Մաշտոցի պողոտա 13

«Հայէկոնոմբանկ» ԲԲԸ
Հ/Հ 163068400718
ՀՎՀՀ 02578234

Տնօրեն՝
_____ Ա. Բաբայան
/ստորագրություն/ Կ.Տ

Հավելված N 5
«15» «մայիս» 2023 թ. կնքված
N ՃՄԲՐ 3-2023 պայմանագրի

ԱԿՏ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 2023թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «__մայիս__» 2023թ.
Պայմանագրի համարը՝ _N ՃՄԲՐ 3-2023__
Պետական մարմինը և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ ներկայացված ----- հաշվետվությունը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը իրականացրել է հետևյալ միջոցառումները՝

N	Իրականացված միջոցառման							
	անվանումը	գործառույթի համառոտ նկարագիրը	արդյունքը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը (հազար դրամ)	Վճարման ժամկետը (ըստ պայմանագրի)
			ըստ պայմանագրի	փաստացի	ըստ պայմանագրի	փաստացի		

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և հաշվետվությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ծառայությունը հանձնեց	Ծառայությունն ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.